



ԳՈՒՐԳԵՆ ՄՈՒԾԵՂԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ (Բանասիրական գիտությունների թեկնածու)

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՇԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ «ԸԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Գևորգյան հոգևոր ճեմարանում տարիներ շարունակ հատուկ ուշադրություն է դարձվել սաների ընթացիկ և ավարտական շարադրություններին, որոնցով ուսուցիչները նպատականի են նրանց ինքնուրույն աշխատանքի՝ միաժամանակ որոշելով ձեռք բերած գիտելիքների և առհասարակ պատրաստականության աստիճանը։ Պատահական չէ, որ ճեմարանի ուսուցչական ժողովները և մանկավարժական խորհուրդը հաճախակի են անդրադարձել այդ շարադրություններին։ Դեռևս 1892 թ. նոյեմբերի 5-ին ուսուցչական ժողովի քննարկած առաջին հարցը վերաբերել է ավարտող ուսանողների քննական շարադրություններին՝ ավարտածուներին։ Այդ ժողովի արձանագրությունում գրած է. «Սովորութիւն գոյ ի ճեմարանիս տալոց աշակերտացն ի գոյուս ճեմարանական տարրուն ի սկզբան անդ ուսմանց նիւթ շարադրութեան՝ առեալ ի մանկավարժութենէ, ի հայոց մատենագրութենէ, յընդհանուր մատենագրութենէ, յընդհանուր պատմութենէ և ի կրոնական ուսմանց. յայսմ սովորութենէ խոտորեալ գտեալ է միայն ամս անգեալ»¹։ Ժողովի որոշման մեջ նշված է, որ շարադրություններ հանձնարարենը անհրաժեշտություն է, թեմաները պետք է վերցնել հայոց, ուսաց և ընդհանուր պատմություն-

ներից, կրոնագիտությունից, տիեզերագիտությունից, ինչպես նաև բնագիտությունից։ Մանկավարժական խորհուրդը, իբրև Ակրոբոնք, ընդունում է (11 հեկտեմբերի, 1909 թ.), որ շարադրություն է գրվելու Գ լսարանու ավանդվող առարկաներից մեկից, ըստ որում՝ թեման ընտրվում է ուսուցչի և ուսանողի փոխադարձ համաձայնությամբ²։ Մինչ այդ էլ եղել է համապատասխան կարգ. յուրաքանչյուր ուսուցչի պարտքն է եղել նախօրոք ուսուցչական ժողովին ներկայացնել իր մասնագիտությունից շարադրության թեմաներ՝ ամեն մի աշակերտի համար առանձին-առանձին։ Ուսուցչական ժողովը ընտրել է այդ թեմաներից մի քանիսը և հաստատել։ Այնուհետև հրավիրվել է ուսանողը, որը իր հայեցողությամբ ստանձնել է որևէ մեկը։ Նա պետք է մինչև տարվա վերջը, քննություններից առաջ ուսուցչական ժողովի քննարկմանը ներկայացներ իր գրավոր աշխատանքը³։ 1909 թ. դեկտեմբերի 23-ին որոշվել է, որ Գ լսարանի ավարտական շարադրությունը կարդալու են երկու ուսուցիչ՝ առարկան դասավանդողը և ընթերական։ Խակ 1910 թ. դեկտեմբերի 11-ի նիստում որոշում է ընդունվում ճեմարանի ուսանողների

² Նույն տեղ, թոյ. 28, վավ. 245:

³ Նույն տեղ, վավ. 45:

⁴ Նույն տեղ, թոյ. 28, վավ. 48:

¹ Տե՛ս <ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ, Գևորգյան ճեմարանի ֆոնտ, № 312:

հաջողված շարադրությունները հրատարակելու մասին⁵:

Եթե հանգամանալից ծանրթանում ենք սաների ընթացիկ աշխատանքների և ավարտաձառների բովանդակությանը և ընդգրկած հարցերին, պարզվում է, որ դրանք ունեցել են կրթա-դաստիարակչական կարևոր նշանակություն՝ բնութագրելով ու մի տեսակ հանրագումարի բերելով ճեմարանում կատարված աշխատանքը: Ահա թե ինչոր շարադրությունները միշտ գտնվել են ուսուցչների ուշադրության կենտրոնում, որոնք բարեխնդորեն ստուգել են, գնահատել, լուսանցքներում արել համապատասխան դիտողություններ:

Ուսանողական այդ գրավոր աշխատանքները բավարար են իրենց ընդգրկած ժեմաներով և շոշափած հարցերով, որոնք վկայում են ճեմարանում տարիներ շարունակ ավանդված բազմակողմանի և խոր գիտելիքների մասին: «Հատկապես ուշադրություն է դարձված հայագիտական հարցերին, որոնք միաժամանակ հայ գրականության պատմության և առհասարակ հայագիտության համար ունեն էական նշանակություն. դրանք լուծում պահանջող խնդիրներ են, որոնց ուղղությամբ առ այսօր մասնագետները տանում են քրոնաշան աշխատանք:

Շարադրություններ են գրվել հայոց հին և միշին դարերի ականավոր մատենագիրների մասին, վերլուծվել ու գնահատվել են նրանց գրական գլուխործողները, իսկ երեսն է անդրադարձել են մատենագրական երկի էական կողմերից մեկին: Ահավասիկ, 11-րդ դարի նշանավոր մատենագիր Արիստակես Լաստիվերտցու «Պատմության վերաբերյալ գրվել են ընթացիկ և ավարտական բազմաթիվ շարադրություններ». Դրանց մի մասը նկարագրական բնույթի է, վերապատմված է «Պատմության բովանդակությունը», իսկ մի քանիսում կան սուր և դիպուկ դիտողություններ, համարձակ և հետաքրքր մտքեր, որպիսիք անգամ չկան համապատասխան տպագիր աշխատություններում: Այդպիսին է, օրինակ, Սմբատ Տեր-Ավետիսյանցի աշխատանքը, գրված 1896 թվականին⁶, այն ստորագրել է Ն. Քարամյանը. Նրա նեկավարությամբ Լաստիվերտցու երկի մասին գրվել են մի շարք շարադրություններ: Ա. Տեր-Ավետիսյանցը կազմել է համապատասխան ծրագիր, կարդացել անհրա-

մեց գրականություն, ձեռքի տակ ունեցել Լամտիվերտցու «Պատմության 1864 թ. ֆրանսերների թարգմանությունը, տպագիր և ձեռագիր բնագրերը, որոնց միջև համեմատություններ է անցկացրել: Խոսել է Պատմության լեզվի և ոճի առանձին հարցերի մասին, շոշափել մատենագրի կրած ապէցության խնդիրը: Չնայած առանձին ոչ ճիշտ մեկնաբանմաներին ու մտքերին, շարադրությունը թողնում է դրական տպագրություն:

«Հայոց հին և միշին դարերի գրականության վերաբերյալ եղած շարադրությունները հաճախ ընդարձակածավագ են և տարրունակ: Օրինակ՝ 1916 թ. Անդրանիկ Օլյոյւճյանը 251 էջերի վրա շարադրել է «Հովիտ. Երվանդ կացու (1240—1325) կենսագրությունը ու իր գրական-քաղաքական գործունեությունը»⁸ ուսումնասիրությունը:

Որոշ շարադրություններ նվիրված են հայ նոր գրականության այնպիսի դեմքերի, ինչպիսիք են՝ Խ. Արովյանը, Ալ. Շիրվանվադենը, Պողոշանը և ուրիշներ: Այսպես, 1907 թ. Գեղորգ Գևորգյանի ավարտական շարադրության թեման է եղել «Անգամությունը Պերճ Պողոշանի գլխավոր երկերում»⁹: Շարադրության վերջուն գրված է՝ «Գովելի» Մ. Արեգյան, <«Ովիաննիսյան»:

Ուշադրությունից դուրս չեն մնացել ընդհանուր և ուստի գրականությունները, մայրենի գրականության և համաշխարհային գրականության առնչությունները: Օրինակ՝ 1892 թ. դեկտեմբերի 15-ին ուսուցիչ Լ. Մանվելյանը մանկավարժական խորհրդի հաստատմանն է ներկայացրել ընդհանուր գրականությունից «Եերասիրի նախորդները, «Անգիական հայարակությունը և գրականությունը Կաուու Բ Ժամանակ» թեմաները: Տարեր ժամանակներում շարադրություններ են գրվել Գողովի, Տուրգենևի, Նեկրասովի երկերի վերաբերյալ, շոշափվել ուսուական և հայկական բանաստեղծությունների առնչությունները: 1910 թ. Ե. Ամասունին ավարտական շարադրություն է գրել «19-րդ դարի գրական ուղղությունները և նրանց արձագանքները ուսուահաց մեջ» թեմայով¹⁰, որը այսօրվա ընթանամբ գերազանց («Գովելի») գնահատականի է արժանացել Մ. Արեւոյանի կողմից: Ի դեպ, մեծավասուակ հայագետը բազմաթիվ շարադրությունների տակ դրել է իր ստորագրությունը՝ ըստ այնմ ստուգելով, շտկերով և գնահատելով դրանք:

Այսուամենայնիվ, առաջին հերթին ուշադրության կիրակետում եղել է հայոց մատեն-

⁵ Նույն տեղ, վավ. 74:

⁶ Նույն տեղ, թղ. 40, վավ. 11, 36, 41, թղ. 41, վավ. 38, թղ. 42, վավ. 25, թղ. 43, վավ. 12, 34, 35, թղ. 44, վավ. 27, թղ. 45, վավ. 18, 32, 51, թղ. 46, վավ. 40, 87:

⁷ Նույն տեղ, թղ. 43, վավ. 12:

⁸ Թղ. 40, վավ. 29:

⁹ Թղ. 41, վավ. 19:

¹⁰ Թղ. 40, վավ. 17:

նագրության, մայրենի գրականության առանցքային խնդիրները: Զարմանափորեն ամբողջովին լեզվական բնույթի շարադրություններ չեն գրվել, մինչդեռ ձեմարանում կարևոր է եղել իին հայերենի ուսումնասիրությունը. լեզվական առանձին դիտողություններ արվել են մատենագրական երեր վերլուծելիս ու գնահատելիս:

Ուսանողական շարադրություններում արծարծվել են հայոց անցյալի պատմության էական կողմերը, որոնց հաճախ տրվել է իմբուրովն և ոչագարակ գնահատություն: Ճիշտ է, շարադրություններ են գրվել նաև ընդհանուր պատմություններ, սակայն դրանց թիվը շատ չէ: Առանձնակի ուշադրություն է դարձված «այսատանի միջնադարյան շրջանի պատմությանը, հատկապես Բագրատունյաց հարստության ժամանակաշրջանին» («Բագրատունյաց անկումը», «Հայաստանի վիճակը Բագրատունյաց անկումից հետո», «Հայոց եկեղեցին Բագրատունյաց թագավորության ժամանակ», «Սելջուկյան թորքերը Բագրատունյաց Հայաստանում (1020—1224)»¹¹):

Միջնադարում հայ ժողովրդի զանազան հատվածների գաղոթը և որոշ զաղթավայրերի պատմությունը գրավել են ձեմարանի ուսանողների ուշադրությունը: Այսպես, օդինակ, 1904 թ. Միհրան Թերլեմելյանը գրել է: «Խաչալիահ հայ զաղթականությունը և նրա կյանքն ու գործունեությունը»: «Գովելի», — ահա Մ. Աբեղյանի գնահատականը: Մի այլ շարադրություն գրված է Լեհահայ զաղութի մասին¹²: Ավտոս, սկզբից պակաս է, հայտնի չէ նաև հեղինակը: Տեսրի շապիկի վրա մեկ ուրիշի կողմից նշված է «1894 թ., սեպտեմբերի 30», որը ճիշտ չէ, քանի որ շարադրության համար օգտագործված աղբյուրներում կան դրանից մոտավորապես երկու տասնամյակ ուշ լույս տեսած գրքերի անվանումներ: Այս ուշագրավ և հետաքրքիր շարադրությունում խոսվում է Լեհահայ զաղութի կազմավորման մասին: Արծարծված է այն ճիշտ միտքը, որ սույն զաղութը կազմավորվել է տարբեր ժամանակներում, իսկ հայերը այստեղ են եկել ոչ թե ուղղակիորեն բուն Հայաստանից, այլ զանազան երկրներում ապաստանելուց հետո:

Հոգևոր ձեմարանում պատշաճ ձևով ուսումնասիրվել են կրոնական ուսմունքը և աստվածաբանությունը, դրանցից գրվել շարադրություններ: Սակայն ակնհայտ է մի հիմնական գիծ, այդ շարադրությունները չեն

¹¹ Վավ. 14, թղթ. 43: «Եղինակը Վահան Տեր-Խաչալիանցն է, գրված է 1905 թ.: Համարձակ և խելացի շարադրանք է:

¹² Թղթ. 47, վավ. 16:

վերաբերում առհասարակ կրոնական ուսմունքին ու աստվածաբանությանը, այլ աւնշակցված են Հայոց Եկեղեցուն ու վարդապետությանը, իսկ ժողովրդի անցյալի պատմությանն ու գրականությանը:

Բավականին թիվ են կազմում այն շարադրությունները, որոնց նյութը հիմնականում վերաբերում է Հայոց Եկեղեցուն կամ այն հայ մատենագիրներին, որոնք ունեն մեկնողական աշխատություններ, մի խոսքով՝ նյութը քաղված է հայոց պատմությունից, ենտևաբար նման շարադրություններով սաներին նպատակամելի են լավագույնս տուսմասիրերու հայրենի գրականություններ, պատմությունն ու մշակույթը՝ կրթելով ազգային եկեղեցուն նվիրված գործիչներ: Սիավասիկ, աղայիսի շարադրություններ են՝ «Ըստրիալին, նորա դարը և նորա ժամանակ հոված կրոնական խնդիրները» (թղթ. 26, վավ. 246), «Ներսես Լամբրուսացու մեկնաբանական գրվածքները» (թղթ. 40, վավ. 26), «Հայոց մարդապետները» (թղթ. 42, վավ. 12), «Միհրիյան խնդիրը ԺԲ դարում հայոց և հունաց եկեղեցիների միջև» (թղթ. 40, վավ. 25) և այլն: Աստվածաբանությունից գրված շարադրությունները ունեն նաև ընդհանուր բարոյագիտական արժեք: Աստվածաբանության ուսուցիչ Արշակ Տեր-Միքայելյանը 1892 թ. դեկտեմբերի 15-ին ձեմարանի մանկավարժական խորհրդին շարադրությունների համար ահա ինչպիսի յեմաներ է ներկայացրել հաստատման՝

ա) Բարու և չարի եռությունը ըստ փիիստիական տեսության և ըստ Հայաստանայց Ենեղեցու հարց:

բ) Մարդու բարոյական համումնքի և աշխարհայեցողության ներգործությունը նորա գործունեության համար.

գ) Ի՞նչ սկզբունքների վրա պետք է հաստատված լինի կրկնությունը և ի՞նչ միջոցներ կտա նորան բարոյականությունը.

դ) Ի՞նչ նախակություն են ունետել Հայոց Ենեղեցու. հատուկ սկզբունքներն և դավանանքները հայոց եկեղեցականաց և ազգի համար¹³:

«Կրոնական ուանունը» և «Աստվածաբանություն» առարկաներից հանձնարարվելիք շարադրությունների հիմնական, առանցքային թեմաները շարունակ կրկնվել են, տարիների ընթացքում հետպիետե ավելացվել են նորերը: Գրված աշխատանքների ընկանակությունից երևում է, որ ուսանողները միշտ չեն, որ արտահայտել են դոգմատիկ, դարեր շարունակ անքննադատ կերպով ընդունված մտքեր ու տեսակետներ: Եթե ուսանող Հակոբ Խալյիսենցը իր «Տա-

¹³ Թղթ. 26, վավ. 246:

ներորդ դարի կորնական ոգին» շարադրությունում (թղթ. 42, վավ. 12) միակողման նիրեն տաներորդ դարի շինարարական ոգին և դրստրված կորնամությունը կապում է լրացող 1000-ամյակի հետ, ապա Եղիազար Փայտանը «Պատմություն Արիստական Հաստիվերտցու» (թղթ. 45, վավ. 18) շարադրությունում համարձակորեն գրում է. «Ամեն ինչը պատճառը մեր մեջքը չէ: Պետք է քննել քաղաքական հանգամանքները»:

Պատմա-փիլիսոփայական և հոգեբանական խնդիրներ շոշափող թեմաները պակաս ուշադրության չեն արժանացել. այս բնույթի շարադրություններ հատկապես գրվել են դարիս սկզբներին: Այսպես, 1907 թ. Առաքել Առաքելյանը (հետագայում դոկտորադրությունուր, գիտության վաստակավոր գործիչ) ընդամենը յոթ էջի վրա խոտացած ձևով գրել է «Տոպենհաուերի, Նիցշեի և Ռուսոյի պատմական հայացքները» իր ավարտաձանը¹⁴: Նույն թվականին՝ հետագայում անվանի հայագետ Թադեոս Ավրամեցյանը ներկայացրել է «Թե ինչ հոգեկան երևոյթներ Վիիիել Վունը քացատրում է ֆիզիոդիգիական երևոյթներով» փայլոն ավարտաձանը¹⁵: 1910 թ. «Համապասպ Ասլանյանը պաշտպանում է «Սանկան հոգեբանությունը», 1914 թ. Բաղրամար Աստվածատրյանը՝ «Հոգեկան հոգնածություն»¹⁶ ավարտաձառները:

Սուանձնակի ուշադրության է արժանի Սարգիս Թոփճյանի «Գրիգոր Մագիստրոսի փիլիսոփայական աշխարհայացքը» ավարտական շարադրությունը¹⁷, որը, փաստորեն, գիտահետազոտական բնույթի աշխատանք է: Այն ունի ներածություն և հինգ ենթավերնագրեր՝ «Գրիգոր Մագիստրոսի աղբյուրները», «Մագիստրոսը որպես Էնցիկլոպեդիստ», գիտությունների բաժանումը և այլ բաժանման տրամարանական հիմքը», «Աստծո էլույունը և ատրիբուտները», «Եկեղեցական դոգմաների ըմբռնուածը», «Տիեզերաբանություն և էթիքա»: Առաջին ենթավերնագրի տակ խոսում է Գրիգոր Մագիստրոսի օգտագործած և նշած աղբյուրների մասին և տալիս որոշ բացատրություններ: Ընդարձակ քարվածքներով մասնավորապես հավաստում է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստութեան» աշխատությունից Մագիստրոսի օգտվելու փաստը: Առհասարակ ամբողջ շարադրանքից երևում է, որ հեղինակը լավատեղյակ է եղել միջնադարյան մեծ մտա-

ծողի գրական ժառանգությանը, խորամուխ եղել նրա երկերի ներքին բովանդակության մեջ, գրել գերազանցապես ինքնուրույն մի աշխատություն՝ օգտագործելով հայ մատենագիտության և հոնա-հոռոմեական գրականության հաղորդած հաևապատասխան փաստերը: Չնայած հաճախ թույլ տված ակնհայտ սխալներին ու թույլ մեկնաբանումներին՝ 11-րդ դարի համապարփակ մտածողի մասին գրված եպակի գործերից է և այսօր էլ, մեր կարծիքով, ներկայացնում է որոշակի հետաքրքրություն:

Դարասկվիթին գրված առանձին շարադրություններում քննված են նաև հողային և առհասարակ տնտեսական խնդիրները (Ա. Բաբայան, «Հողային հարցը Եջմանի գավառում»¹⁸, Գ. Ասիրյան, «ԺԴ դարի հայերի տնտեսական վիճակից որվագծեր»¹⁹ և այլն): Արվեստի այս կամ այն ճյուղին ձեմարանի սաների տեղյակ լինելու մասին են խոտսմ երածշտությունից, պարարվեստից, ճարտարապետությունից գրված շարադրությունները: Այսպես, «Հարականների եղանակների տաղաչափությունը», «Պարի տեղը գեղարվեստի մեջ, նրա զարգացումը, դերն ու նշանակությունը», «Հայոց Եկեղեցական երածշտությունը և ԺԴ դարերում», «Հայկական ճարտարապետություն» և այլն:

Շարադրությունների լեզուն արևելահայերեն է, ոճական առումով մեծ մասամբ դրանք գրված են անխաթար, անհրաժեշտության դեպքում մեջքերումներ են կատարված գրաբար բնագրերից: Քանի որ մեծ մասամբ ուսումնասիրված թեմաները առնչվել են գրաբարով գրված գրականությանը, իսկ կատարում էլ բարձրորակ է, պարզ է դառնում, որ ճեմարանում ինը հայերենի ուսումնասիրությունը տարիներ շարունակ դրված է եղել հաստատուն հիմքերի վրա: Ուսանողները ոչ միայն կարողացել են հմտորեն օգտվել հայկական և հայերեն թարգմանված հնագույն աղբյուրներից, այլև որոշ դեպքերում դիմել են օտարակեկու գրականությանը:

Միշտ չէ, որ նույթը հալորահարված է. կան մակերեսային, ոչ ինքնուրույն շարադրություններ, սակայն դրանք չեն բնորոշողը:

Հասկանալի է, ուսանողը կրել է իր ուսուցիչ ապդեցությունը, հետևաբար այս շարադրությունները ձեմարանում դասավանդողների գիտա-մանկավարժական գործունեության փաստական կողմը բացահայտող և լրացնող նյութեր են: Դրանց ուսումնասիրությունը շատ ու զատ հարցեր կարող են հետաքրքրել, օրինակ, որտե՞ղ են ճեմարանա-

¹⁴ Թղթ. 40, վավ. 14:

¹⁵ Թղթ. 40, վավ. 15:

¹⁶ Թղթ. 40, վավ. 20:

¹⁷ Թղթ. 40, վավ. 13:

¹⁸ Թղթ. 41, վավ. 41:

¹⁹ Թղթ. 40, վավ. 48:

²⁰ Թղթ. 40, վավ. 55:

վարտ, հետագայում նշանավոր գիտնականների, գրողների, պետական-հասարակական գործիչների գրած շարադրությունները, որոնք անհրաժեշտ են այդ անվանի մարդկանց աշխարհայացքի ձևավորումը և այլ կարևոր խնդիրներ լավ ըմբռնելու համար։ Մասնավորապես, որտե՞ղ են մեծ երգահան

Կոմիտասի ղեկավարությամբ և ցուց տված ուղղությամբ գրված շարադրությունները, եթե այդպիսիք կան, ի՞նչ հետաքրքիր փաստեր կան դրանցում։

Անշուշտ, այս և նման հարցերի պարզաբանումը պահանջում է լրացուցիչ ուսումնասիրություն։

